

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լուսինե ՀԱՅԹՅԱՆ

Երևանի պետական համալսարան

ՔԼԻՖՈՐԴ ՕԴԵԹՍԻ («Ձախլիկին սպասելիս») ԵՎ ԼԻԼԻԱՆ ՀԵԼԼՄԱՆԻ («Երեխաների ժամը») ՊԻԵՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ- ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Սույն հոդվածը փորձ է ներկայացնելու 20-րդ դարասկզբի սոցիալ-քաղաքական դրամայի առանձնահատուկ ներկայացուցիչների՝ Ք. Օդեթսի և Լ. Հելլմանի պիեսների վերլուծական մոտեցումները: Նրանց դրամաներում թարերագիր-հասարակություն, կին-տղամարդ, փոխհարաբերությունների հետ միաժամանակ շեշտադրվում են դասակարգային խնդիրները: Այստեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ճգնաժամային դարաշրջանի ամերիկյան հասարակության ազդեցությանը վերոհիշյալ թարերագիրների ստեղծագործության վրա:

Բանալի բառեր. սոցիալ-քաղաքական դրամա, ճգնաժամային դարաշրջան, անհատական և տիպային կերպարներ, դասակարգային խնդիրներ, մշակութային պատմություն

Ք. Օդեթսը և Լ. Հելլմանն այն թատերագիրներից են, ում «բախտ էր վիճակվել» ստեղծագործելու 1930-ականների Միացյալ Նահանգներում տիրող խորը տնտեսական անկայունության և քաղաքական խռովությունների ժամանակաշրջանում: Ժամանակի հասարակական-քաղաքական անցուդարձը, սոցիալ-հոգեբանական ու տնտեսական պայմաններն, անխոս, իրենց անդրադարձն են գտնում այս գրողների ստեղծագործություններում, ովքեր դառնում են իրենց ժամանակի զարկերակը:

Հելլմանն ուներ հստակ դիրքորոշում ժամանակի հասարակական-քաղաքական անցուդարձի վերաբերյալ: Այլ կերպ ասած, նա ամբողջովին գիտակցում էր իր ժամանակի քաղաքական իրադարձությունների դրամատիկ զարգացումները և գրում էր այդ դրամաները սեփական փորձից ելնելով:

Ինչևէ, հասարակական – քաղաքական նման մոտեցումն ու ակտիվությունը միայն Հելլմանին չէ, որ բնորոշ էր, այլ իր ժամանակի շատ ու շատ արվեստագետների: «Ինչ քաղաքական ուղղվածության էլ որ պատկաներ, 30-ականների բնորոշ գիծն այն էր, որ գրողը պարտա-

վորված էր զգում ներգրավվել իր ժամանակի սոցիալական խնդիրների մեջ»,- փաստում է գրաքննադատ Ջերալդ Ռոբկինը /Robkin, 1964: 14/: Եվ սա ճշմարիտ էր ասված Հելլմանի պարագայում ևս: Գրողը հաջողությամբ զուգադրում էր իր հասարակական-քաղաքական ակտիվությունն ու գրական բեղուն գործունեությունը:

Հելլմանը, փաստորեն, սոցիալական դրամայի իսկական ներկայացուցիչ էր: Իսկ սոցիալական դրաման տարբերվում էր դրամայի մյուս տարատեսակներից: «Աստծո և մարդու փոխհարաբերությունները քննելու փոխարեն, ինչպես միասինիստական դրամայում է, սոցիալական դրամատուրգները քննում են մարդուն հասարակության մեջ՝ հակադրելով նրան հանրությանը, կառավարությանը, գիտությանը, եկեղեցուն կամ ընտանիքին» /Kessler-Harris, 2012: 5/: Հելլմանի դրամաներում ևս անհատը հանդես է գալիս ոչ թե առանձին, այլ հասարակության մեջ, ով հավասարապես կրում է նրա գործած սխալների մեղքն ու պատասխանատվությունը: Տվյալ հասարակությունն է ծնել անհատին, և նա ինչ – որ առումով ոչ թե այդ հասարակության խարանն էր, այլ զոհը:

Գրեթե այս նույն տեսակետն է արտահայտված Լ. Հելլմանի պիեսների ժողովածուի ներածության մեջ, որտեղ Հելլմանը «դրել է սոցիալական պատասխանատվության և պայմանավորվածության գաղափարն իր դրամատիկ աշխարհի հիմքում» /Hellman, 1972: ii/: Հասարակության մեղավորության չափաբաժինը անհատի լավ կամ վատ վարքագծի պայմաններում, փաստորեն, նույնքան մեծ է, որքան և իրենը՝ անհատինը:

Բայց հանուն ի՞նչ գաղափարների էր պայքարում գրողը: Գիտակցելով մարդ – հասարակություն սերտ կապը, ինչպես նշվեց, Հելլմանը կոչ էր անում հասարակության միջից դուրս բերել անմարդկային սովորույթներն ու հակումները, այն է՝ անհանդուրժողականությունը, անարդարությունը, խղճի բացակայությունը և այլն: Մեկ անհատը ի վիճակի չէր պայքարելու այդ ամենի դեմ, ոչ էլ պահպանելու իր մարդկային որակները, ուստի հասարակությունն էր պետք փոխել:

Հելլմանի կարծիքով պետք էր բացառել կառավարման բռնատիրական կարգերն ու դաժանությունը երկրում: Մարդը պետք է սովորեր ճանաչել ու հարգել դիմացինի իրավունքներն ու պարտականությունները՝ չմոռանալով իրենը:

Ավելին, որևէ ազգ կամ պետություն չպետք է ճնշեր իրենից ավելի թույլին ու անպաշտպանին: Այս մոտեցման մեջ, թերևս, մեծ դեր ունեւր գրողի՝ ծագումով հրեա լինելը: Իր հայրենակիցները՝ հրեաները, \$աշխտական գաղափարախոսության ու քարոզչության անմիջական զոհերն էին, ինչը գրողը ոչ մի կերպ չէր կարող մոռանալ ու չանդրադառնալ:

Քսաներորդ դարի երկրորդ կեսի ամերիկյան հասարակության մեջ, ինչպես և ամբողջ աշխարհում, տեսանելի էին Երկրորդ աշխարհա-

մարտի բացասական հետևանքները, որոնք գրողը կոչ էր անում շատ արագ վերացնել:

Այսպիսով, Լիլիան Հելլմանը (1905-1984) մեկն էր ամերիկացի այն թատերագիրներից, ով Օդեթսի հետ մեկտեղ գրական ասպարեզ է իջնում 1930-ականներին: Լ. Հելլմանի գրական մեկնարկը տրվում է «Երեխաների ժամը» (1934) և «Փոքրիկ աղվեսներ» (1939) պիեսներով: Վերջինիս պիեսները մերկացնում են չարիքի արտահայտման մի քանի ձևեր, ինչպես, օրինակ, երեխաների նենգ սուտը երկու ուսուցիչների մասին («Երեխաների ժամ», 1934), անգութ ընտանիքի կողմից միմյանց և համաքաղաքացիների հարստահարումը («Փոքրիկ աղվեսներ», 1939 և «Անտառի մեկ այլ հատվածը», 1946), Վերսալյան դաշնագրի սերնդի անպատասխանատու եսասիրությունը («Հսկում Հռենոսի վրա», 1941 և «Փոթորկող քամին», 1944):

Ի տարբերություն Օդեթսի՝ Հելլմանը չէր սիրում քաղաքական դրաման, իբրև այդպիսին, քանզի «ուզում էր, որ իր դրամաները գնահատվեին ոչ թե համաձայն այն աստիճանի, որով դրանք գիտակցաբար լուսաբանում էին ժամանակի խնդիրները, այլ գնահատվեին իբրև արվեստի գործեր, որ խտացնում էին իրենց մեջ հասարակության հիմնահարցերը և ժամանակի մասնավոր լարվածությունը» /Hellman, 1972: 107/: Այլ կերպ ասած՝ Հելլմանն ամեն կերպ փորձում էր արվեստը քաղաքականությունից վեր բարձրացնել: Դրանով էլ նրա քաղաքական դրամաները տարբերվում են Քլիֆորդ Օդեթսի և Ջոն Լաուտնի դրամաներից, ովքեր ավելի շատ իրենց ժամանակի քաղաքական մեկնաբաններն ու պրոպագանդիստներն էին, քան զուտ արվեստագետներ:

Հելլմանի առաջին պիեսը՝ «Երեխաների ժամը», հիմնված է բրիտանական փաստացի դատական վարույթի վրա, որն արտացոլված է Ուիլյամ Ռոզհեթի «Վատ ընկերակցություն»-ում: Այն պատմում է Շոտլանդիայի աղջիկների ակադեմիայի երկու տնօրինուհիներին ուսանողի կողմից առաջադրված կեղծ մեղադրանքի մասին: Պիեսը առաջադրվում է Պուլիցերյան մրցանակի, բայց չի արժանանում այդ պատվին, քանի որ հետագայում պարզվում է, որ նշյալ մրցանակ շնորհողներից մեկը չէր դիտել այդ պիեսի նյութը՝ համարելով բարոյապես վիրավորական:

Հելլմանի մյուս նշանակալից պիեսը «Փոքրիկ աղվեսները», նրա չորս թատերգություններից առաջինն է, ուր հեղինակն ուսումնասիրում է սեփական շահի և պատասխանատվության միջև առկա բախումը: Իրադարձությունները տեղի են ունենում 1900-ին հարավային մի փոքրիկ ավանում. «Փոքրիկ աղվեսները» պատկերում է Հուբարդների հարուստ ընտանիքի ագահությունն արտահայտված եղբայրական հարաբերություններում: Առավել հարստանալու նպատակով ներդրում կատարելով տեղական բամբակի գործարանում՝ ընտանիքը լիովին կործանվում է:

Ուժեղ կերպարավորման, կուռ բովանդակության և ոգեշնչող երկխոսության շնորհիվ պիեսը լայն ճանաչում է բերում հեղինակին:

Հելլմանի հաջորդ պիեսը «Հսկում Հոենոսի վրա» (1941), որի համար նա արժանանում է Դրամայի նյույորքյան քննադատների կենտրոնի առաջին մրցանակին, պատմում է Երկրորդ աշխարհամարտի ժամանակ հականացիստական շարժման մեջ ներգրավված ընտանիքի մասին:

Նա գրում է դրաման 1940 թվականին, երբ դրա կոչն ուղղված ընդդեմ Հիտլերի միավորված միջազգային դաշինքի գաղափարին, ուղղակիորեն հակադրվում է ժամանակի կոմունիստական դիրքորոշմանը՝ կապված 1939թ. օգոստոսի Նացիստական-սովետական խաղաղության դաշնագրի հետ /Rollyson, 1988: 106/: 1942-ի սկզբներին Հելլմանը կազմակերպում է դրա ներկայացումը Վաշինգտոնում՝ իբրև բարեգործական ներկայացում, որտեղ նա խոսում է նախագահ Ռուզվելտի հետ /Gid Powers, 1995: 143/: Հելլմանը գրում է դրա ֆիլմային տարբերակի սցենարը, որ հայտնվում է 1943-ին:

1950-ականներին Հելլմանը ցուցաբերում է մի նոր հմտություն՝ անցում կատարելով Չեխովի թատերգության նուրբ կառուցվածքին («Աշնանային այգի», 1951), ինչպես նաև թարգմանելով ու վերամշակելով այլ երկեր, ինչպիսիք են ժան Անույի «Արտոյտը» (1955) և Վոլտերի «Կանդիդ կամ լավատեսություն» (1957) ստեղծագործությունների երաժշտական տարբերակները:

«Աշնանային այգի» դրաման գրվել է 1949թ. սեպտեմբերին Մեքսիկայի Ծոցի հանգստավայրի ամառային տանը՝ 100 մղոն Նոր Օռլեանից հեռու /Griffin, 1999: 76/: Դրաման միջին տարիքի հասնող մարդկանց պարտությունների, հուսալքությունների ու մարող հույսերի ուսումնասիրությունն է: Ոգեշնչման համար Հելլմանն ապավինում է իր հուշերին՝ կապված իր հորաքրոջ առանձնատանը անցկացրած ժամանակահատվածին /McDonald, 2002: 35/:

Դրամայի գործողությունները տեղի են ունենում մեկ շաբաթվա ընթացքում Կոնստանս Թուքերմենի առանձնատանը Մեքսիկայի Ծոցի ափին: Իր մշտական հյուրերից մի քանիսը վայելում են հետճաշան կոկտեյլներ: Ռոզ Գրիգսը փորձում է զրույցի ներքաշել իր ամուսնուն՝ գեներալ Բենջամին Գրիգսին, ով թերթ է կարդում: Երիտասարդ Ֆրեդերիկ Էլիսն ու իր տատիկը՝ տիկին Մերի Էլիսը, կարդում են մի վեպի շարվածք, որ Ֆրեդերիկը պատրաստվում է տպագրել: Նրա մայրը՝ Քերրի Էլիսը, և Էդվարդը (Նեդ) հանգստասենյակի մյուս հյուրերն են, երբ դրաման սկսվում է:

Հետաքրքրական են Հելլմանի հուշագրությունները, որոնք սկսվում են «Անավարտ կնոջ»-ից (1969) և շարունակվում «Պենտիմենտո»-ում (1973), «Սրիկայի ժամանակը»-ում (1976) և «Միգուցե»-ում (1980): Այս ինքնակենսագրական հուշագրություններում Հելլմանը ներկայացնում է

իր կյանքի ու դարաշրջանի ընդգրկուն պատկերը: Սրանց հրատարակումից հետո որոշակի կեղծիքներ են բացահայտվում, հատկապես «Պենտիմենտո»-ում, ուր նա հայտնում է իր անձնական փոխհարաբերության մասին մի խիզախ կնոջ հետ, որին նա անվանում է Ջուլիա, ում կերպարի վրա է հիմնված Հելլմանի պատմությունը:

1935-ից սկսած Օդեթսի սոցիալական դրամաները դառնում են չափազանց ազդեցիկ, հատկապես՝ Մեծ դեպրեսիայի ավարտին մնացած ժամանակահատվածում: Նրա տեքստերը ոգեշնչում են դրամատուրգների հետագա մի քանի սերունդների, որոնց թվում են Արթուր Միլլերը, Փադի Չենսկին, Նեյլ Սիմոնը և Դեյվիդ Մամեթը: Սակայն նրա հռչակն աստիճանաբար խամրում է Միլլերի, Թենեսի Ուիլյամսի, իսկ 1950-ականների սկզբին ու կեսերին՝ Ուիլյամ Ինգի մեծ ասպարեզ դուրս գալուց հետո:

Օդեթսի դրամատիկ ոճն առանձնանում է մի տեսակ պոետիկ, փոխաբերություններով հարուստ փողոցային խոսքով: Արթուր Միլլերը գրում է Օդեթսի առաջին դրամաների մասին. «Առաջին անգամ Ամերիկայում լեզուն ինքը... առանձնացնում է դրամատուրգի եզակիությունը» /Clurman, 1945: 138/: Էթնիկ և քաղաքային խոսվածքները Օդեթսի մոտ արտացոլում են Սին Օ'Քասի ազդեցությունը, որ սոցիալիստական մեկ այլ դրամատուրգ էր՝ աշխատավորական գաղափարներով: Օդեթսի ոճին բնորոշ են մարդասիրությունն ու հանդիսատեսին կոնֆլիկտի մեջ ներքաշելը: Հաճախ կերպարն ավելի կարևոր է, քան սյուժեն՝ արտացոլելով Անտոն Չեխովի ազդեցությունը /Schiff, 1982: 33/:

Քլիֆորդ Օդեթսի ամենահաջողված ստեղծագործություններից է «Ձախլիկին սպասելիս» (1935) դրաման, որի հերոսը տաքսու վարորդ է, ով որոշում է դիմել գործադուլի: Մինչդեռ պիեսի հիմնահարցը ավելի շուտ վերացական մտորումն է կապիտալիզմի դրական և բացասական կողմերի մասին: Առերևույթ պարզ ու հասկանալի սյուժեի տակ, փաստորեն, քաղաքական խորը ենթատեքստ է ընկած: Հեղինակը միանգամայն հաջող մերկացնում է ժամանակի քաղաքական անցուդարձի դրական ու բացասական կողմերը:

Նույն թվականին Օդեթսը գրել է նաև 1930-ականների մտահոգություններն արտահայտող մեկ այլ պիես՝ «Արթնացիր և երգիր» (1935) խորագրով, ուր մարքսիստ պապը ինքնասպան է լինում՝ ի նպաստ իր ընտանիքի նյութական բարելավման: Վերջինիս թողը նվիրում է կյանքի ապահովագրության համար ստացած գումարը իր համայնքի կարիքներին՝ անձնական շահը ստորադասելով հասարակականին:

Այսպիսով, «Արթնացիր և երգիր»-ը՝ ներկայացված Խմբային Թատրոնի կողմից 1935թ. փետրվարին, հաջորդելով հաջողակ «Ձախլիկին սպասելիս» դրամային, ընդհանուր առմամբ համարվում է Օդեթսի գլուխգործոցը: Այն համարվել է «ամենավաղ նշանակալից հրեական դրաման հրեական թատրոնից դուրս» /Schiff, 1982: 33-34/: Դրաման

վերաբերում է Բերգերների ընտանիքին, որ ապրում է Բրոնքսի Լոնգ-վուդ տարածքում՝ տնտեսական անկման ստվերի տակ: Դրաման խոսքով սկսելու Օդեթի ընտրությունը, նրա երկխոսության ոճը, ինչպես նաև դրամայի ակնհայտ ուղղվածությունը դեպի աշխատավոր դասը և այն փաստը, որ այն առաջին դրաման էր Բրոդվեյում, որ ամբողջովին կենտրոնանում էր հրեաների ընտանիքի վրա, առանձնացնում են «Արթնացի՛ր և երգի՛ր»-ը մյուս ընդարձակ դրամաներից, որ այդ ժամանակ ներկայացվում էին Բրոդվեյում:

«Ձախլիկին սպասելիս» և «Արթնացի՛ր և երգի՛ր»-ի իր դեբյուտներով Օդեթը դառնում է ժամանակի առանցքային դրամատուրգը: Նրա հոչակը անխուսափելիորեն կապված է Խմբային թատրոնի (Group theatre) հետ:

Խոսելով Քլիֆորդ Օդեթի (1906-1963) մասին՝ հարկ է ընդգծել, որ նա մեծ ներդրում է ունեցել ամերիկյան թատերագրության հետագա զարգացման ու վերելքի գործում: Վերջինիս մեծությունը կայանում է նրանում, որ նա խիզախորեն ընդվզում էր ընդդեմ ամերիկյան կեղծ գաղափարների ու «ամերիկյան երազանքների»՝ ջանալով ցրել մարդկանց պատրանքները: Նրա պիեսներն արտացոլում են նյութական հաջողության և բարեկեցության հասնելու ամերիկացիների ձգտումների խաբկանքը:

Եթե 1930-ականների սկզբին Օդեթի առաջին գրական փորձերն անհաջող էին, ապա 1935 թ. միաժամանակ գրված երեք՝ «Ձախլիկին սպասելիս», «Արթնացի՛ր ու երգի՛ր», «Կորուսյալ դրախտ» պիեսները մեծ հաջողություն են բերում թատերագրին: Ք. Օդեթի պիեսների գերակշիռ մասը նվիրված է միջին խավի ամերիկացուն: Գրողը ցույց է տալիս, որ այդ խավի ներկայացուցիչներն առավել տուժում են 1929թ. սկսված ու 1930-ականների սկզբներին էլ ավելի խորացած տնտեսական ճգնաժամից: Իր ստեղծագործություններում Օդեթը պատմում է նաև Ամերիկա ներգաղթած ոչ հարուստ, առավելապես փոքր ֆինանսական հնարավորություններ ունեցող մարդկանց մասին, որոնց համար ճգնաժամն էլ ավելի ծանր հարված էր, քանի որ նրանք դեռևս չէին հասցրել ոտքի կանգնել, ամուր արմատներ գցել Ամերիկայի հողին /Smith, 1997: 120/:

Այսպիսով, եթե համեմատելու լինենք Քլիֆորդ Օդեթի ու Լիլիան Հելլմանի ստեղծագործական արվեստները, ապա պետք է փաստենք, որ երկուսն էլ 1930-ականների Միացյալ Նահանգներում տնտեսական անկայունության և քաղաքական խռովությունների տասնամյակի ամենազդեցիկ թատերագիրներից են: Օդեթն իր գրական գործունեությունը սկսում է «Ձախլիկին սպասելիս» երկով, որը ժամանակի ամենապահանջված թատերական ստեղծագործություններից էր: Հելլմանի գրական գործունեությունը թափ է առնում «Երեխաների ժամը» պիեսի բեմադրությամբ:

Երկու թատերագիրներն էլ իրենց պիեսներով շեշտադրում էին ժամանակի քաղաքական ու տնտեսական անցուդարձը, ներքաղաքական այն կարևոր գործընթացները, որոնք ներկայացնում էին ժամանակի ամերիկացուն՝ իր մտահոգություններով ու խնդիրներով հանդերձ: Նրանց վրա, փաստորեն, մեծ ազդեցություն էին թողել 1930-ականների քաղաքական, սոցիալական ու տնտեսական պայմանները:

Շելլմանի և Օդեթսի պիեսների վերլուծությունը բացահայտում է թատերագրի ու հասարակության փոխազդեցությունը, ինչը լավագույնս բացահայտվում է այդ երկերում տղամարդու և կնոջ, ինչպես նաև՝ դասակարգի դերի քննության միջոցով: Տղամարդու կերպարներն այս գրողների երկերում գրեթե միշտ «աշխատավորներ» են, իսկ կանայք հաճախ «աջակցող» կերպարներ են: Կանացի կերպարներն օգտագործվել են՝ պատկերելու համար քաղաքական և տնտեսական պայմանների թողած ազդեցությունն ընտանիքի վրա: Աշխատավորներին նվիրված պիեսներում օգտագործվել են տարբեր ռասաների և էթնիկական ծագման աշխատավորների կերպարներ, որպեսզի ցույց տրվի վերջիններիս միջև առկա կապը:

Քանի որ հանդիսատեսը հեշտ էր ընկալում այս կերպարները, աշխատավորներին նվիրված թատերգությունը թատրոնում առաջ է բերում նոր փոխհարաբերություն: Այժմ դերասանների և հանդիսատեսի միջև առկա էր հստակ կապ, որը հանդիսատեսի առջև բացում էր թատրոնի երևակայական աշխարհի դուռն ու դյուրացնում վերջիններիս մասնակցությունը թատերական գործողություններին: Հանդիսատեսի համար բնավ խորթ չէր աշխատավոր կերպարներին ոգևորելը, պետին/գործադիր մարմնի կերպարներին սուլելը և պիեսի ընթացքում այլ տեսակի մեկնաբանություններ անելը: Այսպիսին էր, անշուշտ, իրավիճակը Քլիֆֆորդ Օդեթսի «Ձախլիկին սպասելիս» /Hyman, 1997: 65-69/ մեկ գործողությամբ պիեսի ժամանակ: Այդ պիեսն աշխատավորներին նվիրված թատերգության վառ օրինակ է և մերկացնում է 1930-ականների քաղաքական և տնտեսական պայմանները:

Օդեթսի պիեսները վերլուծող պատմաբանները, կենսագիրներն ու թատերագետները միտված էին քննել միայն այդ թատերգություններում առկա խորհրդանիշները: Առկա են բազում քննարկումներ կապված Աստվածաշնչին արված հղումների, օգտագործված մրգի խորհրդանիշի, ինչպես նաև երկի և հեղինակի անձնական կյանքի կապի վերաբերյալ: Թեև այս ամենը վավերական վերլուծություններ են, այնուամենայնիվ կան Օդեթսի գրական գործունեությունը հետազոտելու այլ էական եղանակներ: Սույն վերլուծությունն օգտագործում է պիեսի սցենարն ու հիմնական տարրերը, բեմադրումը, կերպարները, թեման, բախումը, գազաթնակետն ու հանգուցալուծումը՝ լուսաբանելու համար ճգնաժամային դարաշրջանի ամերիկյան հասարակության թողած ազդեցությունն Օդեթսի վրա /Clifford, 1939: 1-31/:

Այսպիսով, պիեսի մթնոլորտը, որը ցանկացած թատերգության բեմադրման կարևոր մասն է, 1930-ականներն են՝ տնտեսական ճգնաժամն ու քաղաքական անկայունությունը: Կերպարները պայքարում են ճգնաժամի դեմ և գործադուլ են կազմակերպում ավելի լավ վարձատրության և արհմիությունում ձայն ունենալու համար, որն էլ ավելացնում է արդեն անկայուն մթնոլորտի լարվածությունը: Դրվագներից, որոնք ընդհանուր առմամբ յոթն են, մի քանիսը հավանաբար տեղի են ունենում Նյու Յորքից դուրս: Սցենարում դա հստակ չէ, սակայն հայտնի է, որ գործողության վայրերը տարբերվում են Ջոյի և Էդնայի տնից, լաբորատորիայից, Իրվի և Ֆլորիի հայրական տնից և հիվանդանոցից: Այս վայրերից յուրաքանչյուրը ստեղծում է թեթևակիորեն տարբեր մթնոլորտ, սակայն բոլորն էլ աշխատավորների համար լարվածություն են ստեղծում: Պիեսի կառուցվածքի շնորհիվ «Ձախլիկին սպասուխս»-ի կերպարները ընկալելի են:

Այստեղ առկա է անհատական և տիպային կերպարների համակցում: Զանգվածային տեսարաններում կերպարներն ընդհանրացված են, իսկ դրվագներում նրանք բարդանում են: Պիեսի առանցքային կերպարներից են Հարրի Ֆեթը, արհմիության նախագահը, Հրացանավորը, որը Ֆեթի «պատճենն» է: Յուրաքանչյուր դրվագում հայտնվում են նոր կերպարներ: Առաջինները Ջոյն ու Էդնան են: Ջոյը տաքսու ավագ վարորդներից է, իսկ Էդնան նրա կինն է: Նրանք պայքարում են, որպեսզի ծայրը ծայրին հասցնեն և սատարեն իրենց զավակներին: Նրանց հետևում են արդյունաբերող Ֆայեթն ու լաբորանտ Միլլերը, որը թողնում է աշխատանքը, երբ նրան ասում են, որ լրտեսի աշխատակիցներից մեկին: Ապա ներկայացվում են քեբի վարորդ Իրվի, նրա քրոջ՝ Ֆլորիի և վերջինիս փեսացուի՝ Սիդի կերպարները: Իրվն ու Ֆլորին պայքարում են, որպեսզի գոյատևեն և հոգ տանեն իրենց հիվանդ մոր համար: Ապա դրվագների հաջորդականությունն ընդհատվում է, երբ Քլայթոնը՝ լաբորատորիայի լրտեսն ու շտրեյկբրեյկերը, փորձում է ընդհատել գործադուլը: Երբ Քլայթոնը որպես խարդախ բացահայտվում է, դրվագները շարունակվում են դոկտորներ Բարնսի և Բենջամինի միջոցով. վերջինս աշխատանքից հեռացվում է հրեա լինելու համար, թեպետ հիվանդանոցի լավագույն բժիշկներից է: Վերջում պիեսն ավարտվում է Ագաթի կերպարի ներմուծմամբ: Տաքսու մեկ այլ վարորդ համախմբում է մյուս բոլոր վարորդներին և գործադուլ է սկսում, երբ նրանք տեղեկանում են, որ Ձախլիկը՝ գործադուլավորների առաջնորդը, որին նրանք սպասում էին, սպանվել էր:

Համարյա անհնար է խորությամբ նկարագրել Օդեթսի ստեղծած կերպարները, քանի որ նա չի ներկայացնում բարդ կերպարներ և օգտագործում է աշխատավորական պիեսների հիմնական կառույցը: Օդեթսը բացահայտում է միայն այն թեմաները, որոնք նա ցանկանում է զարգացնել իր պիեսներում: Նա իր կերտած կերպարներին օգտագոր-

ծում է, որպեսզի հանդիսատեսին հղի քաղաքական պարզագույն ուղերձ և այդ իսկ պատճառով կարիք չունի ստեղծելու բարդ կերպարներ: Օդեթան ավելի շատ կենտրոնանում է իր ժամանակի սոցիալական, ոչ թե հոգեբանական հիմնախնդիրների վրա: Ուստի նրան սուսկ անհրաժեշտ է կերտել կերպարներ, որոնք ներկայացնում են այս հիմնախնդիրներով պայմանավորված փոխհարաբերությունները: Իր պիեսների հաջողության համար նրան անհրաժեշտ է պատկերել միայն արհմիության ղեկավարների և աշխատավորների միջև առկա լարվածությունը:

Այսպիսով, Հելլմանի և Օդեթի պիեսները ոչ միայն բավարարում էին նրանց առջև դրված խնդիրները, այլև ներդրում կատարում մշակութային պատմության զարգացման մեջ: Այս գրողներն իրենց ստեղծագործությունների միջոցով արտահայտում են 1930-ականների մթնոլորտն ու այն վերածում խոշոր բեմականացումների: Նրանք 30-ականների ամենահաջողակ թատերագիրներն են, որոնց պիեսները հաջողությամբ բեմականացվում էին Բրոդվեյում անգամ այն ժամանակ, երբ չէին արժանանում գրաքննադատության դրական գնահատանքին: Հելլմանն ու Օդեթսը հանդիսատեսին գրավում էին իրենց պիեսների թեմաներով՝ օգտագործելով սեփական փորձը, ինչպես նաև ընդհանուր, սոցիալական ընկալումներն ու հեռանկարները: Այս հեղինակներն իրենց ուրույն տեղն ու դերն ունեն մշակույթի պատմության էջերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Clifford O. *Six Plays*. New York: Random House. 1939.
2. Clurman H. *The Fervent Years*. New York: Hill and Wang, 1945 (ed. 1968).
3. Gid Powers R. *Not Without Honor: The History of American Anticommunism*. Free Press. 1995.
4. Griffin A. Geraldine. T. *Understanding Lillian Hellman*. University of South Carolina Press. 1999.
5. Hellman L. Introduction, in Dashiell Hammett. *The Big Knockover*, 1972.
6. Hyman C. *Staging Strikes: Workers' Theatre and the American Labor Movement (Critical Perspectives on the P)*. Temple University Press. 1997.
7. Kessler-Harris A. *A Difficult Woman: The Challenging Life and Times of Lillian Hellman*. Bloomsbury Publishing. 2012.
8. McDonald Robert L. Paige L. R. *Southern Women Playwrights: New Essays in Literary History and Criticism*. University of Alabama Press. 2002.
9. Robkin G. *Drama and Commitment: Politics in the American Theatre of the Thirties*. Bloomington. Indiana University Press. 1964.
10. Rollyson Carl E. *Lillian Hellman: Her Legend and Her Legacy*. St Martins Pr. 1988.
11. Schiff E. *From Stereotype to Metaphor: The Jew in Contemporary Drama*. Albany: SUNY Press. 1982.

12.Smith S. H. American Drama: The Bastard Art. Cambridge University Press, 1997.

Լ. ԱԻՏՅԱՆ – *Социально-политический контекст пьес Клиффорд Одетса («В ожидании левши») и Лилиан Хеллман («Детский час»)*. – Данная статья является попыткой представления анализа пьес К.Одетса и Л.Хеллман в контексте социально-политической драмы начала 20-ого века. В их драмах в частности, рассматриваются такие вопросы как отношения драматург-общество, мужчина-женщина, а так же классовые проблемы. Особенное внимание уделяется влиянию американского общества кризисной эпохи на творчество вышеупомянутых авторов.

Ключевые слова: социально-политическая драма, кризисная эпоха, индивидуальные и типажные образы, классовые проблемы, культурная история

L. HAYTYAN – *The Social-Political Context of the Plays of Clifford Odets (Waiting for Lefty) and Lillian Hellman (The Children’s Hour)*. – The present article is an attempt to present the analytical approaches to C.Odets’s and L.Hellman’s plays who were the 20th century sociopolitical drama representatives. Particularly, here the themes of playwright and society as well as man and woman and class belonging are revealed. Moreover, we pay a special attention to the influence of American society of the crisis era on the above mentioned authors.

Key words: sociopolitical drama, crisis era, individual and stock characters, class problem, cultural history

Ներկայացվել է՝ 12.04.2019
Երաշխավորվել է ԵՊՀ Արտասահմանյան գրականության
ամբիոնի կողմից
Ընդունվել է տպագրության՝ 24.05.2019